

մեծութիւն և մեղմութիւն, քո սրտին՝ փափկութիւն և զգայնութիւն։ Քեզ սովորեցրի աշխարհը հասկանալ։ Դու բարձրացար և նպատակիդ հասար, չիմա կարող ես հանգստանալ։

Խանգաղատանօք մերձեցաւ Թշնուհին մի անգամ ևս իւր լուսով լուսաւորեց նորան և ան յայտացաւ։

Խաղաղութիւն էր փայլում ծերուկի գէմքի վերայ։

Ս. Ս.



ՅՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

—*—

Աղյատների գործադրութիւնը—Արևելեան Պրուսիայում սովորութիւն է գարձել, որ աղքատները ուրամբ օրերին անշուշտ տնետուն ըրջում են—Զ պֆենիդ (1 կռուկէկ) ողորմութիւն ստանալու։ Մատամանակներում Ս. քաղաքի աղքատները ի նկատի ունենալով, որ ողորմութեան սահմանած չափը խիստ չէ և չի համապատասխանում արդի կենցաղավարութեան, որոշեցին բարձրացնել իրանց վաստակը և այս վախճանով գործադրութ ձեռնուու համարեցին։ Աւրաբթ օրերից մէկին նորա սովորութեան համեմատ տնետուն ման չեկան, այլ մի պատգամուոր առաքեցին։ որ բոլոր բնակիչներին յայտնէ, թէ եթէ այսուհետեւ ողորմութիւնը կ պֆենիդի շրաբքանայ, նորա ամենքը վճռել են քաղաքից հեռանալու, ժաղովուրդը, վախճանով որ կը զրկուի «աստուածընտիր մարդիկներից»։ Հաւանաւթիւն տուեց նոցա համեստ պահանջին, և չէնց հետեւեալ օրը, աղքատները եռանդով շարունակեցին կատարել իրանց բարեպաշտական պտոյտը։

—*—

Կարույիների օրենած քուրը—Մի բժիշկ „Semaine médical“-ի մէջ հրատարակել է կաթոլիկ եկեղեցիների օրհնած ջրի առողջապահական հանգամանքները, Արովինետեւ եկեղեցիներում օրհնած ջուրը անդադր շշափիլում է շատ անգամ խիստ անմաքուրութիւնը, բժիշկը ենթադրեց, թէ օրհնած ջուրը երբեմն կարող է վարակիչ հիւանդութեանց տարածման նպատակ։ Այս վախճանով նա զննեց

մի բազմամարդ եկեղեցու օրհնած ջուրը և մէջը դտաւ տեսակ տեսակ բակտէրիաների (ասրամիլիոկիլերի) ստեպտօկիլերի, ցոլիքացիլեների, լոօմիերեան բացիլերի և այլոց) մեծամեծ բջյլեր, Աներջինների ներդործութիւնը կենցանիների վերայ փորձելով, նա համոզուեցաւ, որ իրաք յիմենիի կերպամաշկութիւն կոչուած բկացաւի) բացիլներ են, եւ եթէ յիշենք, թէ բարեպաշտները շատ անգամ օրհնած ջրով թրջած մատերը շրթունքներին են քսում, կարելի է երևակայել, թէ ինչպէս նոյն ջրի ամանը հիւանդութեան տարափոխիկ միջոց է գառնուում։

* * *

Մի մեծագործ ապատանաւան մանուկների համար։ — Պատուական աղքատանցներով հոչակուած Մեծ Բրիտանիայի լաւագոյն կազմակերպուած և ընդարձակացյն աղքատանցը Վալտոնուումն է (Walton-on-the-Hill), որ 3000 բնակիչների համեմատ ծաւալունի։ Այս սքանչելի հաստատութեան նշանաւոր բաժիւն է կազմում մանուկների ապատանարանը, որ իւր տեսակի մէջ միահատիկ պիտի համարուի։ Այդ մասը բաղկացած է 18 տներից յատկապէս մանուկների բնակութեան համար, կառավարչի և բարապանի բնակարանից, հիւանդանոցից, դպրոցից, խոհանոցից, լողարանից, բաղանիքից, ժողովարանից, շահմարանից, նախօթևանից և պէսպէս արշեստանոցներից։ Այս «մանկական գիւղի» բոլոր շենքերը գեղեցիկ են և կառուցած են քարից կամ աղիւսից։ Մի լոյն ծառափողոցով բաժանուած են մանչերի տնակները աղջիկների տնակներից։ Իւրաքանչիւր տնակի տարածութեան մէջ կարող են ամենայն գիւղութիւններով և յարմարութիւններով պատուագրուիլ 30 մանուկ, ել չենք հաշուում իւրաքանչեւրի գեղեցիկ վարդերով զարգարած ծաղկանցն ու խաղալու համար ընդարձակ գաւիթը, որ մասամբ ծածկուած է—վատ եղանակին մանուկները բացօմենայ շմողնելու համար։ Փոքրիկ աղջիկների տնակները յանձնուած են մի մի տանտիվուջ խնամքին։ Հարապուած հրապարակի վերայ գտնվուում է մի մեծ սեղանատուն։ Խորհնոցի հանդերձանքներն ու սարուածները վերջին կատարել ագործութիւններ են։ Փոքրիկների մաքրութեան, առողջութեան և հրահանգութեան վերաբերեալ տնօրինութիւններն ել ոչ մի պակաս բան չունին։ Առաւելապէս ուշադրութիւն է գարձեած, որ սորվեցնեն լուացք լուանալ, արգուիկել, կարել և տան միւս բոլոր աշխատութիւնները կատարել։ Տնակի բոլոր մատակարարութիւնները տառնտիվուջ և իւր որդեգիրների ձեռքով են կատարվում։ Ննջարանները վերնայարկուում են, ուր նոյնպէս պայծառ լուսի պէս յայտնի երկուում։ մարդաբաւր ողորմածութիւնը։ Հասակաւոր աղջիկը բլնին ձիւսափայլ սպիտակեղեններով հանգեր-

ձած լւաւ անկողիններ և պահպանում են օրօրոցների փոքրիկներին: Խւրաքանչիւր մահճակալի կշտմին կայ գրքերի և խաղալիկների մի արկղիկ: Այս երջանիկ մանուկները իրանց շուրջն էլ չեն տեսնում այն թշրւառութեան հետքն անգամ: որի ճանկերից փրկուել են: Մինչև անգամ նոցա հագուստը միատեսակ՝ զինուորանոցները յիշեցնող՝ համագեղեսներ չեն: այլ նոցա հագցնում են այնպէս: ինչպէս որ սովորաբար հագնում են բարեկեցիկ բանուորների դուստրները: Մանչերի տնակները չենքով: օգափոխութեամբ: լուսաւորութեամբ և մնացած յարմարութիւններով նման են աղջիկների տնակներին: իսկ առաջնորդութիւնը տարբեր է: Այստեղ իւրաքանչիւր տնակը մի ամուսնացած զոյգի պաշտպանութեան է յանձնուած: որոնցից էրիկը վարժ արհեստաւոր պէտք է լինի և իւր արհեստը սովորեցնել պիտի կարողանայ: վասն զի բոլոր մանչերը արհեստ սովորելով պարտաւոր են: Այս նպատակով կարգուած են գերձակութեան: կոշկակարութեան: հիւսութեան և այլ ընդարձակ արհեստանոցներ: հարկաւ պահաս չեն նաև երկրագործութեան և պարտիզանութեան աշակերտներ իրանց ուսուցման վերաբերեալ պիտոյքներով հանդերձ: Վալտոնի աշղբատանոցի մէջ պատսպարուած մանուկների հասակը տարուերեցում է $1\frac{1}{2}$ -ից մինչև 14 տարիքը: Վերը հարեւանցի յիշատակած նախօմեանիքը սահմանուած է բոլոր մանուկները 2 շաբաթով պատսպարելու համար՝ նախ քան նոցա տեղաւորելն իսկական ասպատանարանի մէջ: յընթացս այդ օրերի նոքա պատրաստվում են իրանց ողբալի անցեալից աւելի հաճոյական ապագային փոխուելու համար ընտելանալու:

* *

Փոշին—բարոյականուրիկան օրինակ:—Անզիական բարոյախօս Ֆ. մ. Ինօսկինը վարդապետում է: թէ աղնուագոյն բարոյախօսութիւնը ոչ այլ ինչ է: բայց եթէ գեղասիրութիւն: որ և փորձում է հաստատել պիտուա օրինակով:

— Բնութեան առաջին օրէնքն է—ապրել: իսկ կեանքի երկրորդ անունն է—«օգնել»: Մահուան երկրորդ անունն է—«որշել»: սերտութիւնը լուծել: Բոլոր իրերի հետ միաբանութեամբ գործել—այս է կեանքի օրէնքը: իսկ իրերի մէջ անիշխանական մրցումը—կազմալուծութեան օրէնք է: Մեր ոտքի տակ փոշին էլ ներկայացնում է «կեանք» և «կազմալուծութիւն»: Արդեօք աւելի աղտոտ բան կարող է լինել: քան ցեխն ու տիզմը: այն ևս զոր օր: գործարանների մուտք ու ծխով լցուած քաղաքի մէջ և ոտքերով տրորած փողոցի ցեխը: Այդպիսի շաղաղուած տղմից վեր առնենք անձրւային օրը մի ունի: Այդ շաղաղի մէջ անշուշտ կը գտնենք կաւ:

մուր, փոքր ինչ աւազ և չուր: Այս բոլոր բաղկացուցիչ մասերը մշտապէս իրար դէմ մաքառում են և միմեանց բնութիւնն ու զօրութիւնը փոխադարձար խախտում են: կոյր մրցմանը աշխատելով միմեանց կոխտուել, որպէս զի ուրիշի հաշուով իրանց կեանքը փրկեն: Աւազը ճմլվում է կաւի մէջ: կաւը—ջրի մէջ: մուրը խառնվում է երկուսի մէջ ևս՝ կեղտոտելով ամենայն բան: Իսկ այժմ երեակայենք: թէ այդ մի ունիկի ցեխը կատարեալ հանգիստ վիճակի մէջ է գրուած և թէ իրա բաղկացուցիչ համասեռ մասերը զանգուել են միմեանց հետ: այնպէս որ համապատասխան հիւլէները կարողացել են իրար մերձենալ: Ամէնից առաջ կազմակերպում է կաւը: Օտար խառնուրդներից աղատուելով, քիչ քիչ կազմիում է սպիտակ կաւահողը, որ սաստիկ տաքութեան ենթարկուելով՝ սիրուն յախճապակի է գտանում: Բայց փոփոխութեան սահմանը միայն այս արհեստական ձևով չի վերջանում: Այլ սպիտակ կաւը մաքրվում է: ապա կարծրանում է: ինքնին իւր բնութեամբ այնպէս հրաշալի կերպով այլափոխվում է: որ լուսից գեպի ինքը դրաւում և հաւաքում է պայծառագոյն կապոյտ ճառագայթները: մերժելով մնացած գյուները: Այս կերպարանքով կաւը կոչվում է շափեղայ: նոյն ընթացքով աւազից կազմվում է շողակն կամ արեակն (օպալ) և սև մրից—աղամանդը: Վերջապէս ջուրն էլ է զտվում և ցողի կաթիլ է գտանում: իսկ եթէ կատարեալ կերպով զարգանայ: նաև աստղի ձևով է բիւրեղանուում: Եւ ահա մի ունիկի տղմից՝ տնտեսական աշխատութեան շնորհով՝ մենք ստանում ենք շափիղայ: շողակն և ագամանդ — ընդելուզած աստեղակերպ սառուցի մէջ:

Մարդկութեան գործքերը քննելով՝ Ինօսկինը չի գործածում բարութիւնն և «չարութիւն» բառերը: այլ կեանք տուող և մահացնող: «շինող» և «եղանող» մարդկի է ճանաչում աշխարհում: նուրա աչքում ամենայն կեանք առանց աշխատութեան շնորհով՝ մենք ստանում ենք շափիղայ: շողակն և ագամանդ — ընդելուզած աստեղակերպ սառուցի մէջ:

Որպէս զի մարդկային կեանքն աղնուանայ: նորա կարծիքով: ամենայն սերունդ պէտք է ջանայ ձգտել իմաստուն խաղաղութեան և աղնիւ գոհութեան: ուստի և ամենայն մարդ պարտաւոր է:

1) Առ հասարակ գոհ լինել աւելի համեստագոյն կեանքից:

2) 2նշին բաներից քաղել որչափ հնարաւոր է մեծագոյն ինդութիւն և զուարծութիւն:

3) Գործել միայն այն, ինչ որ մեր ընկերների գերագոյն երջանկութեան կարող է նպաստել:

4) Կուրօրէն և նախապաշարմամբ շպաշտել այն, ինչին որ մեր սիրտը չի կազում:

և 5) Քաղերաց չցանկալ մեր զիտութիւնը աւելացնել, մինչև որ լիովին չտիրապետենք այն, ինչ որ առ ժաման ուսումնասիրում ենք:

* *

Նոր Պահպահ.—Այսպէս են կոչում Պրիեն քաղաքի աւերակները, որի հողակոյտը այժմ բաց են անում և նորագոյն համաստեան դիտերից ամէնահրաշալին է համարում: Ե. յդ քաղաքը Փոքր Ասիայում է եղել և նորա տեղ կանգնած է այժմեան Սամսունը: Մի քանի տարի առաջ անզլիական համաս գիտնականները գտան և հետազոտեցին Աթենասի տաճարը, քաղաքի զինաւոր սրբութիւնը: Որ Աղքասանկը մեծի հրամանով կառուցուել էր, բայց յետոյ խոպան մնաց և խաղու աւերահցաւ շրջակայ ժողովրդեան ձեռքորդ 1895թ. Պրուսիայի տէրութիւնը գումարներ նշանակեց պեղումները նորոգելու համար: այն ևս երիտասարդ ճարտարապետ Վիլհելմ Վիլիբերդի առաջնորդութեամբ: Ե. յդ գործն այնքան առաջացել է, որ պեղումների արդեանց մեծ կարեորութիւնը յայտնի երևում է: բաց են անում մի քաղաք: որ այնպէս լաւ է պահպանուած: ինչպէս հռչակաւոր Պոմակէան: Այդ գիտը մեծ նշանակութիւն է ստանում: մանաւանդ այն պատճառով, որ մինչ ցայսօր ոչ մի ուրիշ պեղում ճիշգ գաղափար չի տուել հին յունաց քաղաքի, անոր հասարակաց շենքերի և մասնաւոր տների մասին: Բայսուող քաղաքը անշուշտ Յունաստանի ծաղկեալ ժամանակին է պատճանում: անոր փողոցները ուղղի անկիւնով են կտրուած և կանոնաւոր յատակագիծ ունին: Հոդի տակից երևան են գալիս սիւների կարգեր, թատրոններ, կրպակներ, տներ իրանց ներքին կաչ կարասիքով և լիտակատար տնտեսական պիտոյքներով: Եթենասի տաճարից գէպի հարաւ գտնվում է „agora“, այսինքն շաղացին ժողովից որձանաղարդ հրապարակը՝ չորեք կուսի արձակ սիւներով զարգարած: անաղուրտ պահպանուել է՝ թատրոն յիշեցնող մի փոքր քառանկիւնի շենք: 16 շաբթ նստարաններորդ որ անշուշտ քաղաքային նորհրդեան սրահ է եղել: Ե. յս շենքի մի պատի մէջ կայ համար—յունաց ճարտարապետութեան գրեթէ հազուադիւն և անյայտ հանդամնիք: Հողի շեղջերից վերջնականապէս մերկոցրած շենքերի մէջ: աւելի աշքի է ընկեւում թատրոնը զեղեցիկ պահպանուած բնմակ: որով հարաւոր է դառնում լուծել յունաց թատրոնին վերաբերեալ մի քանի այնպիսի խնդիրներ: որոնք ցայսօր վիճել են:

Ա. Ա.

† ՎԼԱԴՍ ԳԼԱԴՍՈՒՆ.

Վլադստոն վախճանուեցաւ, և զրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ողբաց նորա մահը: Բոլոր ազգերի թերթերը, խօսելով նորա մասին՝ համարում են առ հասարակ այդ մահը մի մեծ կորուստ ոչ միայն անզլիացիների, այլ և ընդհանուր մարդկութեան համար: Քիչ մարդիկ կարելի է ցոյց տալ պատմութեան մէջ, որոնք իրենց մեծ հոչակի հետ միանգամայն այնպիսի ընդարձակ ու բացարձակ համակրութիւն վայելած լինին ազգակիցների և օտարների: կողմնակիցների և հակառակորդների կողմից անխտիր: որպիսին արտայայտուեցաւ մեծ ներունու մահուան առթիւ՝ աշխարհի ամեն կողմերից: նորա երկար կեանքի ասպարէզը փառաւոր գործերի մի ահազին շղթայ է ներկայացնում՝ նորա հանճարը բազմակողմանի նշանաւոր յատկութիւնների մի հրաշալի զուգորդութիւն: բայց նշանաւոր գործեր շատերն են կատարել: մեր գարն ունի քաղաքագէտներ, ճարտասաններ, տնտեսագէտներ և լւու, որոնք կարող են յաջողութեամբ մրցել նորա հետ: և մէթէ Վլադստոն սիրուած և յարգուած է բոլոր մարդոց կողմից՝ առանց ազգի և կրօնի խտրութեան: այդ առաւել նորա համար է, որ նա ինքն ևս սիրել է ամէնքին անխտիր: պաշտպաններ աշխարհի առաջ բոլոր աղգերի պատիւը՝ ինեղծի և անկեալի գատը: նա իւր մեծ հանճարի հետ միացընել է ևս առաւել մեծ բարոյական յատկութիւններ, որոնք նորա իսկական փառքն են կազմում: և քրիստոնէից եկեղեցին ամէնից աւելի իրաւունք ունի պարծենալու այդ փառքով: որովհետեւ քրիստոնէական է այն ամէնը: ինչ որ գեղեցիկ է և գնեմ այդ մեծ մարդու մէջ: Յանձնի Վլադստոնի գերեզմանն է իջնում եկեղեցւոյ այն սակաւաթիւ զաւակներից մին, որոնք ամենազարթկեցեցուցիչ պայմանների մէջ գտնուելով հանդերձ տմօթ շեն համարել աւետարանին աշակերտնելը՝ ջերմեռանզն քրիստոնէանի են եղել ամրող կեանքում և յաղթել աշխարհին: և մէթէ քաղաքագիտութեան մասին այն վատ կարծիքը կայ: ասում է Ծր. Վելտի թղթակիցը: որ նա փշացնում է մարդու բնաւորութիւնը՝ որչափ ծանր պէտք է լինէր ուրեմն մի կեանքի մէջ: որ 22 տարեկանից սկսած մինչեւ 85 տարին քաղաքագիտութեան էր նուիրուած՝ քրիստոնէական կեանքի գաղափարը բարձր պահէլ: Վլադստոն պահեց բարձր՝ այդ վկայում են նորա բոլոր գործերն ու բոլոր կենսագիրները: և այդ նորա ամէնից աչքի ընկնող արժանիքն է:

Ա. Ա. Վլադստոն ծնուած է 1809 գեկտ. 29-ին Հիւնրապուլում: նորա հայրը վաճառական էր: որ